# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2015թ մարտի 6** **N 30-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 107 հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. 2015 թվականի հունիսի 7-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ և Հարթավան գյուղական համայնքներում նշանակել և անցկացնել համայնքի ղեկավարի հերթական ընտրություններ:
2. 2015 թվականի հունիսի 7-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Արթիկ և Սորիկ գյուղական համայնքներում նշանակել և անցկացնել ավագանու անդամների հերթական ընտրություններ:

**Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**